**«Արինտերլա» ՓԲԸ**

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված
տարվա վերաբերյալ

Ապրիլ 2026

**Բովանդակություն**


| | |
|---|---|
| 3 | Անկախ աուդիտորի եզրակացություն |
| 7 | Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն |
| 8 | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն |
| 9 | Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն |
| 10 | Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն |
| 11 | Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ |
| 12 | Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ |


---

| | |
|---|---|
| **Ընկերության գտնվելու վայրը՝** | Հայաստանի Հանրապետություն |
| **Իրավական ձևը՝** | Փակ բաժնետիրական ընկերություն |
| **Հիմնական գործունեության նկարագիրը՝** | Ընկերության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում |
| **Գլխավոր տնօրեն՝** | Լևոն Ալթունյան |

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

# Անկախ աուդիտորի եզրակացություն

*Ներկայացվում է «Արինտերլև» ՓԲԸ բաժնետերերին*

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արինտերլև» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման էական քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն :

## Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին համապատասխան:

Մենք հավատացած ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

## Առանցքային աուդիտորական հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Մենք անդրադարձել ենք այդ հարցերին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված յուրաքանչյուր հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում, ներկայացված է այդ համատեքստում:

**Աուդիտի առանցքային հարց՝ Հիմնական միջոցների, ինչպես նաև նրանց հետ առնչվող դրամական հոսքեր ստեղծող միավորների արժեզրկման ցուցանիշների գնահատում**

**Հիմնական միջոցների արժեզրկման ցուցանիշների գնահատում (ներառյալ վարձակալական բարելավումները)**

Արժեզրկման ցուցանիշների առկայության գնահատումը ընկերության ղեկավարության համար հանդիսանում էր մասնագիտական դատողության առանցքային հարց: 2024 և 2025 թվականներին Ընկերությունը մուտք գործեց աճի փուլ՝ Երևանում երկու նոր ամբուլատոր կլինիկա բացելով և առաջին անգամ ներդնելով ստացիոնար ծառայություններ: Սա պահանջեց զգալի կապիտալ ներդրումներ և ֆինանսավորում, մինչդեռ սկզբնական շրջանում շահագործման մակարդակը լիարժեք չէր, և տարվա արդյունքները փակվեցին զուտ վնասով: Որոշելը՝ արդյոք առկա է

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

արժեզրկման ցուցանիշ, և եթե այո՝ դրա վերականգնվող գումարը, բնույթով անորոշ է և կախված է բազմաթիվ ենթադրություններից ու գործոններից:

Ղեկավարության կողմից կիրառված հիմնական դատողությունների շրջանակը ներառում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ցուցանիշներ, մասնավորապես՝ տեխնոլոգիական, տնտեսական և իրավական միջավայրում տեղի ունեցող զարգացումներ, բժշկական սարքավորումների երկրորդային շուկայում և վարձակալական բարելավումների առնչությամբ անշարժ գույքի շուկայում տիրող պայմաններ, տեղական վարկային տոկոսադրույքների շարժերը, մաշվածության կամ ֆիզիկական վնասի ապացույցները, ակտիվների օգտագործման մակարդակը (ներառյալ հնարավոր պարապուրդը), գործառնությունների դադարեցման կամ վերակազմավորման պլանները, սպասվող շահագործման ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև բյուջեի և փաստացի արդյունքների համադրումը: Մենք նաև հաշվի ենք առել, որ Ընկերությունը տարվա վերջում ցուցակված չէր, իսկ պարտատոմսի թողարկում իրականացվել է 2025 թվականին՝ որպես հետագա իրադարձություն:

**Մեր կողմից իրականացված ընթացակարգերը ներառել են.**

- Ղեկավարության կողմից արժեզրկման ցուցանիշների գնահատման և Նանսենի ու Քոչարի կլինիկաների զարգացման պլանների ուսումնասիրություն:
- Արտաքին գործոնների գնահատում՝ մեքենաների/սարքավորումների երկրորդային շուկայի միտումները, վարձակալական բարելավումների համար անշարժ գույքի շուկայական պայմանները, տեխնոլոգիական/տնտեսական/իրավական միջավայրի զարգացումները, ինչպես նաև տեղական կորպորատիվ վարկային տոկոսադրույքների փոփոխությունները:
- Մաշվածության կամ ֆիզիկական վնասի նշանների ստուգում և ակտիվների օգտագործման գնահատում՝ ներառյալ այն, թե արդյոք որևէ նշանակալի ակտիվ պարապ էր:
- Բյուջեի և փաստացի արդյունքների վերլուծություն և 2025 թվականի վնասի հիմնական գործոնների գնահատում (վարձակալության և կոմունալ ծախսեր, նախագործառնական աշխատակազմի և վերապատրաստման ծախսեր, նոր վարկերի և վարձակալական պայմանագրերի ֆինանսավորման ծախսեր, ինչպես նաև բարձր մաշվածություն):
- Կլինիկաների զարգացման կանխատեսումներում ներառված հիմնական ենթադրությունների գնահատում և բարձր մակարդակի զգայունության վերլուծությունների իրականացում՝ պարզելու համար, թե արդյոք հնարավոր փոփոխությունները կարող են վկայել արժեզրկման մասին:

**Հիմնական դիտարկումներ**

Իրականացված ընթացակարգերի հիման վրա մենք արձանագրեցինք. 1. Տեխնոլոգիական, տնտեսական կամ իրավական միջավայրում բացասական փոփոխություններ չկան: 2. Մեքենաների/սարքավորումների երկրորդային շուկայում անկում չի նկատվել: 3. Տեղական վարկային տոկոսադրույքներում էական փոփոխություններ չկան, որոնք կարող էին ազդել օգտագործման արժեքի հաշվարկի վրա: 4. Մաշվածության, ֆիզիկական վնասի կամ նախատեսված օգտագործման փոփոխության ապացույցներ չկան: 2025 թվականի վնասը համահունչ էր նախատեսված ընդլայնմանը և նոր կլինիկաների նախնական շահագործման փուլին: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման ցուցանիշներ չեն հայտնաբերվել:

**Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի

Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք սխալի կամ խարդախության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները անբավարար են, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տրամադրում ենք նաև հավաստիացում, որ պահպանել ենք անկախությանը վերաբերող էթիկայի պահանջները և տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, կիրառելի լինելու դեպքում, ռիսկերը վերացնելու կամ անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ :

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Սերգեյ Յակովլև, FCCA
Աուդիտի ղեկավար

10 ապրիլի 2026թ.

ք.Երևան

**«Արինտերլև» ՓԲԸ**
**Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն**
**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

| | Ծնթ. | 2025թ.<br>հազ.դրամ | 2024թ.<br>հազ.դրամ |
|---|---|---|---|
| Հասույթ | 5 | 5,660,019 | 4,469,756 |
| Ինքնարժեք | 6 | (4,250,486) | (3,194,426) |
| **Համախառն շահույթ** | | **1,409,533** | **1,275,330** |
| | | | |
| Վարչական ծախսեր | 6 | (1,382,922) | (1,215,717) |
| Իրացման ծախսեր | 6 | (108,112) | (103,568) |
| Այլ եկամուտ | | 168,025 | 134,593 |
| Այլ ծախսեր | 6 | (232,344) | (271,782) |
| **Գործառնական վնաս** | | **(145,820)** | **(181,144)** |
| | | | |
| Ֆինանսական եկամուտ | | 29,062 | 50,607 |
| Ֆինանսական ծախսեր | | (483,983) | (330,955) |
| Փոխարժեքային տարբերություններից զուտ (վնաս)/օգուտ | | (75,401) | 46,940 |
| **Վնաս մինչև հարկումը** | | **(676,142)** | **(414,552)** |
| | | | |
| Շահութահարկի գծով վերականգնում | 7 | 61,166 | 52,234 |
| ***Տարվա զուտ վնաս*** | | **(614,976)** | **(362,318)** |
| Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք | | **(614,976)** | **(362,318)** |

7-ից 42-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են ընկերության ղեկավարության կողմից՝ 2026 թվականի ապրիլի 10-ին:

Արևիկ Մխիթարյան
Լիազորված անձ, կառավարող տնօրեն

Լուսինե Ավետիսյան
Գլխավոր հաշվապահ

«Արինտերլն» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Ծնթ. | 2025թ. հազ.դրամ | 2024թ. հազ.դրամ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 11 | 2,824,874 | 2,919,792 |
| Ոչ նյութական ակտիվներ | 12 | 85,145 | 106,669 |
| Հետաձգված հարկային ակտիվ | 13 | 160,242 | 99,076 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ | 17 | 1,615,317 | 1,648,258 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով | | 23,870 | 8,758 |
| | | **4,709,448** | **4,782,553** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8 | 35,767 | 24,516 |
| Բանկային ավանդներ | | 428,413 | - |
| Տրված փոխառություններ | | 4,220 | 1,850 |
| Պաշարներ | 9 | 131,448 | 129,704 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 10 | 444,075 | 412,588 |
| | | **1,043,923** | **568,658** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **5,753,371** | **5,351,211** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | | 998,475 | 998,475 |
| Կուտակված վնաս | | (842,799) | (227,823) |
| Լրացուցիչ կապիտալ | | 54,150 | 54,150 |
| Պահուստային կապիտալ | | 21,396 | 21,396 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **231,222** | **846,198** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր | 15 | 768,663 | 744,275 |
| Վարձակալական պարտավորություններ | 17 | 1,553,223 | 1,549,631 |
| Հատուցումը վերադարձնելու պարտականություն | 18 | 58,171 | 158,408 |
| Թողարկված պարտատոմսեր | 15 | 1,000,000 | - |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | | 590 | 690 |
| | | **3,380,647** | **2,453,004** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 14 | 1,015,808 | 954,160 |
| Վարկեր | 15 | 601,750 | 664,343 |
| Վարձակալական պարտավորություններ | 17 | 393,707 | 310,961 |
| Հատուցումը վերադարձնելու պարտականություն | 18 | 100,237 | 58,757 |
| Այլ պարտավորություններ | | - | 63,788 |
| Թողարկված պարտատոմսեր | 15 | 30,000 | - |
| | | **2,141,502** | **2,052,009** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **5,522,149** | **4,505,013** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **5,753,371** | **5,351,211** |

| | 2025թ.<br>հազ.դրամ | 2024թ.<br>հազ.դրամ |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Բժշկական ծառայությունների դիմաց ստացված դրամական միջոցներ | 5,346,183 | 4,354,113 |
| Դեղերի վաճառքից մուտքեր | 281,229 | 340,899 |
| Ստացված տոկոսներ | 53,011 | 321 |
| Այլ մուտքեր | 64,568 | 41,866 |
| | **5,744,991** | **4,737,199** |
| Դեղերի, նյութերի ձեռքբերման գծով վճարումներ | (741,629) | (575,606) |
| Ծառայությունների մատուցման գծով վճարումներ | (839,175) | (591,072) |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | (2,527,286) | (1,852,800) |
| Վճարված շահութահարկ | - | (5,254) |
| Վճարումներ այլ հարկերի և պարտադիր վճարների գծով | (854,718) | (715,203) |
| Անհատույց տրված ակտիվներ | (10,832) | (14,369) |
| Այլ ելքեր | (171,810) | (59,500) |
| | **(5,145,450)** | **(3,813,804)** |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **599,541** | **923,395** |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր*** | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքի գծով մուտքեր | 1,536 | 9,209 |
| Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր | (241,690) | (783,430) |
| Ավանդների մարում, զուտ | (402,075) | - |
| Փոխառությունների տրամադրում | (3,650) | (458) |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(645,879)** | **(774,679)** |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր (ծնթ. 15)** | | |
| Վարկերի ստացում | 255,417 | 718,970 |
| Վարկերի մարում | (760,576) | (426,082) |
| Վարձակալական պարտավորությունների մարումներ | (324,644) | (276,203) |
| Տոկոսների մարում | (54,090) | (78,764) |
| Փաստաթղթային ակրեդիտիվների մարումներ | - | (92,602) |
| Պարտատոմսերի թողարկումից ստացված վճարումներ | 1,001,690 | - |
| Պարտատոմսի արժեկտրոնի վճարումներ | (60,000) | - |
| ***Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | **57,797** | **(154,681)** |
| ***Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր*** | **11,459** | **(5,965)** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով | (208) | 220 |
| Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ | 24,516 | 30,261 |
| ***Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ*** | **35,767** | **24,516** |

«Արինտերլն» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Կանոնադրական կապիտալ Հազ. դրամ | Կուտակված շահույթ Հազ. դրամ | Լրացուցիչ կապիտալ Հազ. դրամ | Պահուստային կապիտալ Հազ. դրամ | Ընդամենը Հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբեր 2024թ.** | **998,475** | **(227,823)** | **54,150** | **21,396** | **846,198** |
| Տարվա վնաս | - | (614,976) | - | **-** | **(614,976)** |
| **31 դեկտեմբեր 2025թ.** | **998,475** | **(842,799)** | **54,150** | **21,396** | **231,222** |

| | Կանոնադրական կապիտալ Հազ. դրամ | Կուտակված շահույթ Հազ. դրամ | Լրացուցիչ կապիտալ Հազ. դրամ | Պահուստային կապիտալ Հազ. դրամ | Ընդամենը Հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| **31 դեկտեմբեր 2023թ.** | **998,475** | **134,495** | **54,150** | **21,396** | **1,208,516** |
| Տարվա վնաս | - | (362,318) | - | **-** | **(362,318)** |
| **31 դեկտեմբեր 2024թ.** | **998,475** | **(227,823)** | **54,150** | **21,396** | **846,198** |

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. Ընդհանուր տեղեկություններ ........ 12
2. Պատրաստման հիմունքներ ........ 13
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ ........ 16
4. Ֆինանսական գործիքներ ........ 18
5. Հասույթ ........ 22
6. Ծախսեր ըստ բնույթի ........ 23
7. Շահութահարկի գծով ծախս ........ 24
8. Դրամական միջոցներ ........ 24
9. Պաշարներ ........ 24
10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր ........ 25
11. Հիմնական միջոցներ ........ 26
12. Ոչ նյութական ակտիվներ ........ 28
13. Հետաձգված հարկային ակտիվներ ........ 28
14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր ........ 29
15. Թողարկված պարտատոմսեր ........ 29
16. Վարկեր ........ 30
17. Վարձակալության պարտավորություններ և օգտագործման իրավունքով ակտիվներ ........ 32
18. Հատուցումը վերադարձնելու պարտականություն ........ 32
19. Պայմանական դեպքեր ........ 33
20. Գործարքներ կապակցված կողմերի հետ ........ 34
21. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը ........ 35
22. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր ........ 37
Հավելված Ա Իրական արժեքի չափման բացահայտումներ ........ 38
Հավելված Բ Գործունեության լիցենզիաներ ........ 39

## 1. Ընդհանուր տեղեկություններ

«Արինտերլև» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) հիմնադրվել է 2003թ. հոկտեմբերին, 2023թ. հուլիս ամսին վերակազմակերպվել է փակ բաժնետիրական ընկերության:

Ընկերությունը նորարարական բժշկության կենտրոն է` հայտնի որպես «Վարդանանց բժշկական կենտրոն», որտեղ տրամադրում են հոսպիտալացում չպահանջող բժշկական բոլոր ծառայությունները ապահովագրական ընկերությունների շահառուներին, պետական տարբեր ծրագրերում ընդգրկված շահառուներին, ինչպես նաև պացիենտներին, ովքեր բուժվում են իրենց միջոցներով:

Ամբուլատոր ծառայություններից բացի, ընկերությունը 2024 թվականի դեկտեմբերի 15-ից սկսած սկսել է մատուցել նաև ստացիոնար ծառայություններ (վիրաբուժական և այլ նոր ծառայություններ) նոր մասնաճյուղում (Նոր Նորք-Նանսեն):

Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է լիցենզիաներով, որոնք ներկայացված են Հավելված Բ-ում։

Ընկերության գործող կանոնադրությունը գրանցվել է 10.07.2023թ. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից (գրանցման համար` 286. 120. 1328990, վկայական`03 Ա 062168):

2025թ. Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 618 անձ (2024թ.` 498 անձ):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության բաժնետերերի ցանկը հետևյալն է.

Ինթելլիջենթ Մենեջմենթ ՍՊԸ - 61. 94%
ԵՄ-Հայաստան ՓՄՁ հիմնադրամ - 26.76%
Նորայր Ալթունյան - 9.3%
Մասիս Վարդանյան - 1%
Տիգրան Փինաջյան - 1%

Ընկերությունը գործունեություն է ծավալում Երևանում` Վարդանանց 18/1, Հրաչյա Քոչար 35/1, Դեմիրճյան 38 հասցեներում, Գայի 10/7, 12, 13, 14, 15, Կոմիտաս 49, Վանաձորում` Թատերական 2 հասցեում և Սևանում` Նաիրյան փող. 169 հասցեում:

### Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022 թվականի փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունը շարունակական ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, ինֆլյացիան նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները նաև կանխատեսում են տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

ՀՀ տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից դեպի ՀՀ տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը, սուր գնաճը և ՌԴ առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության վրա:

Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է առկա համաշխարհային ցնցումներին և կարողացել է տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ գրանցել ինչպես 2025, այնպես էլ 2024 թվականներին՝ հիմնականում զբոսաշրջության, մի շարք ընկերությունների Հայաստան վերաբաշխման և տրանսֆերտների զգալի աճի շնորհիվ: Հայաստանի տնտեսությունը 2025 թվականին ցուցաբերել է կայուն և արագացող աճ՝ ՀՆԱ-ի տարեկան աճը կազմել է 7.2%՝ զգալիորեն գերազանցելով կառավարության նախնական բյուջետային կանխատեսումը՝ մոտ 5.1%: Կառավարության 2021-2026 թվականների տնտեսական ծրագիրը նպատակ ունի զարգացնել արտահանմանն ուղղված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների ջանքերի միջոցով, ներառյալ բիզնես միջավայրի բարելավումը, ենթակառուցվածքների զարգացումը և առևտրային կապերի ամրապնդումը:

Այսպիսի գործարար միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկվելիք միջոցառումները դժվար է կանխատեսել, և Ընկերության ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

## 2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 19-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների՝ ներառյալ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտները (ՖՀՄՍ), Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունները (հավաքականորեն՝ ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ), պահանջներին համապատասխան:

ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

***Չափման հիմքերը***

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

*Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ*

*Ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ*

| | |
|---|---|
| ՀՀՄՍ 21.8 | Արժույթը համարվում է փոխանակելի մեկ այլ արժույթի հետ, եթե կազմակերպությունը կարող է ձեռքբերել մյուս արժույթը որոշակի ժամանակահատվածում, որը թույլ է տալիս սովորական վարչական ուշացում, և շուկայի կամ փոխանակման մեխանիզմի միջոցով, որի դեպքում փոխանակման գործարքը կստեղծեր կիրառելի իրավունքներ և պարտավորություններ: |
| ՀՀՄՍ 21.19Ա | Կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը չափման ամսաթվի դրությամբ, երբ արժույթը այդ ամսաթվին փոխանակելի չէ մեկ այլ արժույթի հետ (ինչպես նկարագրված է 8, 8Ա-8Բ և Ա2-Ա10 կետերում): Սփոթ փոխարժեքը գնահատելիս կազմակերպության նպատակն է արտացոլել այն փոխարժեքը, որով չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև տեղի կունենար կանոնավոր փոխանակման գործարք՝ գերիշխող տնտեսական պայմաններում: |
| ՀՀՄՍ 21.57Ա | Երբ կազմակերպությունը հաշվարկում է սփոթ փոխարժեք, քանի որ արժույթը չի կարող փոխանակվել մեկ այլ արժույթի հետ (տե՛ս կետ 19Ա), այն պետք է բացահայտի տեղեկատվություն, որը թույլ կտա իր ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին հասկանալ, թե ինչպես է արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու անկարողությունը ազդում կամ ակնկալվում է, որ կազդի կազմակերպության ֆինանսական ցուցանիշների, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա: Այս նպատակին հասնելու համար կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն հետևյալի մասին՝ |

ա. արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու անկարողության բնույթի և ֆինանսական հետևանքների մասին,

բ. օգտագործված սփոթ փոխարժեք(ներ)ի մասին,

գ. հաշվարկման գործընթացի մասին, և

դ. այն ռիսկերի մասին, որոնց կազմակերպությունը ենթարկվում է արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու անկարողության պատճառով:

*ա) 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ*

Հետևյալ փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար.

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություն))

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ): Փոփոխությունները պահանջում են գնահատել, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի հետ, և երբ՝ ոչ: Փոփոխությունների համաձայն կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը, եթե այն եզրակացնում է, որ արժույթը փոխանակելի չէ այլ արժույթի հետ:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել***

ՀՀՄՍ 8.30 Եթե կազմակերպությունը չի կիրառել հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած նոր ՖՀՄՍ, այն պետք է բացահայտի՝

(ա) այդ փաստը. և

(բ) հայտնի կամ ողջամտորեն գնահատելի տեղեկատվություն, որը վերաբերում է նոր ՖՀՄՍ-ի սկզբնական կիրառման ժամանակահատվածում կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա դրա հնարավոր ազդեցության գնահատմանը:

ՀՀՄՍ 8.31 ՀՀՄՍ 8.30-ի համաձայն պետք է հաշվի առնել հետևյալ տեղեկատվության բացահայտումը՝

(ա) նոր ՖՀՄՍ-ի վերնագիրը,

(բ)հաշվապահական քաղաքականության մեջ առաջարկվող փոփոխության կամ փոփոխությունների բնույթը,

(գ) այն ամսաթիվը, նախքան որը ՖՀՄՍ-ը պետք է ընդունվի,

(դ) այն ամսաթիվը, նախքան որը նախատեսվում է ՖՀՄՍ-ի սկզբնական ընդունումը, և

(ե) կամ՝

(i) ակնկալվող ազդեցության քննարկումը. կամ

(ii) եթե այդ ազդեցությունը անհայտ է կամ չի կարող ողջամտորեն գնահատվել, այդ փաստը:

***բ) Դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ***

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍԽ-ի կողմից և գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք սակայն Ընկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան ժամանակաշրջանների համար.

- *Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») և ՖՀՄՍ 7-ի («Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ») փոփոխություններ)*
- *Բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ):*

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար.

- *ՖՀՄՍ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում,*
- *ՖՀՄՍ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ:*

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից 2024 թվականի ապրիլին հրապարակված ՖՀՄՍ 18-ը՝ «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում», փոխարինում է ՀՀՄՍ 1-ին և կհանգեցնի էական

փոփոխությունների ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտներում, այդ թվում ՀՀՄՍ 8-ում՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքը» (նախկինում՝ «Հաշվապահական քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ): Չնայած ՖՀՄՍ 18-ը չի ազդի համախմբված ֆինանսական հաշվետվություններում հոդվածների ճանաչման և չափման վրա, այն, ինչպես կանխատեսվում է, էական ազդեցություն կունենա որոշակի հոդվածների ներկայացման և բացահայտման վրա: Այս փոփոխությունները ներառում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության մեջ դասակարգումը և ենթագումարները, տեղեկատվության ագրեգացումը/ապագրեգացումը և պիտակավորումը, ինչպես նաև ղեկավարության կողմից սահմանված արդյունավետության չափանիշների բացահայտումը:

Տվյալ փոփոխությունները ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

***Գնահատումներ և ենթադրություններ***

*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ - ծնթ. 21*

Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերջինիս օգտագործման ժամկետի գնահատումն է (ի տարբերություն դրա գոյատևման ժամկետի): Հիմնական միջոցների միավորների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը դատողության հարց է, որը հիմնված է նման ակտիվների փորձի վրա: Ղեկավարությունը գնահատում է մնացած օգտակար ծառայության ժամկետները՝ ըստ ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և գնահատված ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները կազմակերպության համար տնտեսական օգուտներ կբերեն: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել էականորեն տարբեր:

*Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության կորուստ*

Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության համար ընկերությունը կիրառել է պարզեցված մոտեցում՝ հաշվարկելու սպասվող վարկային կորուստները: Այդ պատճառով ընկերությունը չի հետևում վարկային ռիսկի փոփոխություններին, այլ յուրաքանչյուր հաշվետու օրվա դրությամբ ճանաչում է կորուստների հատուցում՝ հիմնված ամբողջ կյանքի ընթացքում սպասվող կորուստների վրա: Ընկերությունը առևտրային պահանջների համար հատուցման չափը հաշվարկում է երկարաժամկետ հակակողմի ռիսկի վարկանիշի հիման վրա, իսկ տրամադրված պարտքերի համար՝ Moody's-ի կողմից սահմանված ոլորտային հավանականության հիման վրա:

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է դեֆոլտային, եթե պայմանագրով նախատեսված վճարումները ուշացել են 90 օրով: Սակայն որոշ դեպքերում ընկերությունը կարող է ֆինանսական ակտիվը համարել դեֆոլտային նաև այն ժամանակ, երբ ներքին կամ արտաքին տեղեկությունները վկայում են, որ ընկերությունը քիչ հավանական է ստանա պայմանագրային ամբողջական գումարները, նախքան ընկերության կողմից պահվող վարկային ապահովումների հաշվառումից առաջ: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում հաշվետվությունից այն ժամանակ, երբ այլևս չկա պայմանագրային դրամական հոսքերը վերականգնելու ողջամիտ ակնկալիք:

*Պաշարների իրացման զուտ արժեքը*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք պաշարների զուտ իրացման արժեքը պակաս է դրանց ինքնարժեքից, և նման հանգամանքներում պաշարների ինքնարժեքը նվազեցնում է մինչև իրացման զուտ արժեք: Գնահատումները հիմնված են հաշվետու

ամսաթվից հետո առկա հանգամանքների ուսումնասիրության վրա, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում սպասվող փոփոխությունների վերաբերյալ Ընկերության ղեկավարության սպասումների վրա:

*Շարունակական գործունեության սկզբունք*

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են շարունակվող գործունեության սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է սովորական գործունեության շարունակություն, ակտիվների իրացում և պարտավորությունների կատարում՝ բիզնեսի բնականոն ընթացքի շրջանակներում:

Ղեկավարությունն ընդունում է, որ ընկերությունը շարունակելու է իր գործունեությունը շարունակվող գործունեության սկզբունքին համապատասխան, և նման եզրակացություն կատարելիս հաշվի է առնվել ընկերության գործող մտադրությունները և ֆինանսական վիճակը:

Ընկերության ղեկավարությունը ունի ողջամիտ ակնկալիք, որ ընկերությունը կարող է շարունակել իր գործունեության կենսունակությունը կանխատեսելի ապագայում: Հետևաբար, ընկերությունը շարունակում է ֆինանսական հաշվետվությունները պատրաստել շարունակվող գործունեության հիման վրա, և այս հաշվետվություններում չեն ներառվել որևէ ճշգրտումներ, որոնք կարող էին առաջանալ այն պարագայում, եթե ընկերությունը չկարողանար շարունակել գործել որպես շարունակվող գործունեություն:

*Վարձակալություն*

Որոշ վարձակալական պայմանագրերի համար, որոնցում ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ, անհրաժեշտ է որոշել վարձակալության ժամկետը, այդ թվում՝ արդյոք ընկերությունը ողջամտորեն վստահ է իր կողմից վարձակալական տարբերակների կիրառման հարցում (տե՛ս Ծանոթագրություն 16):

Վարձակալության պարտավորությունները չափելու համար կիրառվող հավելյալ վարկավորման տոկոսադրույքի որոշումը (տե՛ս Ծանոթագրություն 16):

Բոլոր վարձակալությունները հաշվառվում են՝ ճանաչելով օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալական պարտավորություն, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- ցածր արժեք ունեցող ակտիվների վարձակալություն, և
- վարձակալություններ, որոնց տևողությունը 12 ամիս կամ պակաս է:

Վարձակալական պարտավորությունները չափվում են վարձատուին վճարվելիք պայմանագրային վճարումների ներկայիս արժեքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Զեղչման տոկոսադրույքը որոշվում է վարձակալության պայմանագրում առկա տոկոսադրույքի հիման վրա, եթե այն հնարավոր է հստակ որոշել, իսկ այն դեպքերում, երբ այն պարզորոշ չէ (ինչպես սովորաբար լինում է), կիրառվում է ընկերության հավելյալ վարկավորման տոկոսադրույքը վարձակալության մեկնարկի պահին: Փոփոխական վարձակալական վճարները վարձակալական պարտավորության չափման մեջ ներառվում են միայն այն դեպքում, երբ դրանք կախված են որևէ ցուցանիշից կամ տոկոսադրույքից: Նման դեպքերում վարձակալական պարտավորության սկզբնական չափման ժամանակ ենթադրվում է, որ փոփոխական բաղադրիչը մնում է անփոփոխ վարձակալության ողջ ժամկետի ընթացքում: Այլ փոփոխական վարձակալական վճարները ճանաչվում են որպես ծախս՝ այն ժամանակաշրջանում, որը վերաբերում է դրանց:

Վարձակալական պարտավորությունները հետագա չափման ընթացքում ավելանում են՝ պայմանավորված անփոփոխ տոկոսադրույքով հաշվարկվող տոկոսագումարներով մնացորդային պարտավորության վրա և նվազում են կատարված վարձակալական վճարումների արդյունքում:

Օգտագործման իրավունքով ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի մնացորդի ընթացքում կամ ակտիվի մնացորդային տնտեսական օգտակար կյանքի ընթացքում, եթե բացառիկ դեպքերում այն համարվում է ավելի կարճ, քան վարձակալության ժամկետը:

**Դատողություններ**

*Իրական արժեքի չափում*

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտարկելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1 - Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված);*
- *Մակարդակ 2 - Ուղղակի կամ անուղղակիորեն դիտարկելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գների;*
- *Մակարդակ 3 - Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա):*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արդար արժեքը, որոնք դասակարգված են որպես ամորտիզացված արժեքով գնահատված, էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

## 4. Ֆինանսական գործիքներ

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

Պարտքային ռիսկ

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ:

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական ռիսկերի կառավարման հիմնական նպատակն է սահմանել ռիսկի շեմեր և ապահովել, որ ռիսկերի ազդեցությունը մնա այս սահմանների մեջ: Գործառնական և իրավաբանական ռիսկերի կառավարման ֆունկցիաները նախատեսված են ներքին քաղաքականությունների և գործընթացների ճիշտ կիրառումն ապահովելու համար՝ գործառնական և իրավաբանական ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված՝ նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

### (ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ,
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,

- Վարձակալական պարտավորություններ,
- Վարկեր,
- Տրված փոխառություններ,
- Բանկային ավանդներ:

**(բ) Ֆինանսական գործիքներն ըստ կատեգորիաների**

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

***Ֆինանսական ակտիվներ***

| | 2025թ.<br>հազ. դրամ | 2024թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 294,874 | 281,464 |
| Դրամական միջոցներ | 35,767 | 24,516 |
| Տրված փոխառություններ | 4,220 | 1,850 |
| Բանկային ավանդներ | 428,413 | - |
| | **763,274** | **307,830** |

***Ֆինանսական պարտավորություններ***

| | 2025թ.<br>հազ. դրամ | 2024թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Վարձակալական պարտավորություն | 1,946,930 | 1,860,592 |
| Վարկեր | 1,370,413 | 1,408,618 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 605,297 | 544,683 |
| Թողարկված պարտատոմսեր | 1,030,000 | - |
| | **4,952,640** | **3,813,893** |

**(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ**

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ավանդներ, առևտրային դեբիտորական պարտքեր, առևտրային կրեդիտորական պարտքեր, տրված փոխառություններ, ինչպես նաև ստացված վարկեր և թողարկված պարտատոմսեր: Թվարկված ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, որոնք դասակարգված են արդար արժեքի հիերարխիայի Մակարդակ 3-ում, արդար արժեքը որոշելու հետ կապված հիերարխիայի մակարդակների, օգտագործված գնահատման տեխնիկաների և էական չդիտարկվող մուտքերի մանրամասները ներկայացված են Յատված Ա-ում:

***Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ***

Ընկերության հիմնական նպատակն է սահմանել քաղաքականություններ, որոնք ուղղված են ռիսկերի նվազեցմանը հնարավորինս, առանց անթույլատրելիորեն ազդելու ընկերության մրցունակության և արդյունավետության վրա: Այս քաղաքականությունների վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորև:

*Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է ապահովագրական ընկերությունների միջոցով մատուցվող ծառայություններից:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից և դրանց համարժեքներից: Վերջիններիս դեպքում ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատությունները: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի վերաբերյալ հետագա բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 10-ում:

**Դրամական միջոցներ**

Դրամական միջոցների բաշխվածությունը ՀՀ վստահելի բանկերում հետևյալն է՝

| | 2025թ.<br>հազ. դրամ | 2024թ.<br>հազ. դրամ |
|---|---|---|
| Բանկ Ա | 14,086 | 12,287 |
| Բանկ Բ | 440 | 5,512 |
| Բանկ Գ | 1,861 | 768 |
| Բանկ Դ | 13,625 | - |
| Այլ | 3,445 | 3,022 |
| | **33,457** | **21,589** |

Ընկերության գլխավոր հաշվապահը կանոնավոր կերպով ստուգում է բանկերի վարկանիշները: Հաշվետու ամսաթվի դրությամբ գործընկերների պարտականութությունների չկատարման հետևանքով առաջացող վնասներ չեն ակնկալվում:

*Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

*Արտարժութային ռիսկ*

